



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

ՀՐԱՄԱՆ

< 02 > Շրջաբաժնի 2016 թ. N 2/420 -Ա

Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, Դ.ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային ծառայության մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի N05/2016 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի Գուգարքի տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսային կետի մաքսային ձևակերպումների 2-րդ բաժանմունքի պետ Մանվել Հովհաննիսյանին, նույն բաժանմունքի մաքսային տեսուչ Դավիթ Անտոնյանին և նախաբացթողումային հսկողության վարչության Գուգարքի տարածաշրջանային բաժնի Բագրատաշենի բաժանմունքի 4-րդ հերթափոխի մաքսային տեսուչ, հերթափոխի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Համբարձումյանին հայտարարել նկատողություն:

2. Անձնակազմի կառավարման վարչության պետ Ե.Սարգսյանին - հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆ